ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.2/5719-2026**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-1220-17.12.2025-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝**

1. Առաջարկում ենք կողմին նրա իրավահաջորդով չփոխարինելու դեպքում վարույթը վերսկսելու նորմին հետադարձություն տալ՝ հաշվի առնելով, որ այն միտված է դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը:

Ըստ այդմ, առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածում «գործերի վրա» բառերից հետո լրացնել հետևյալ «, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, որը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա» բառերը:

**2.** Բարձրագույն դատական խորհրդի կողմից հրապարակված հաշվետվությունից բխում է, որ 2025 թվականին ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան մուտքագրվել է ընդհանուր 29.633 հայցադիմում:

Ըստ այդմ, հիմք ընդունելով դատավորների ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում ենք երկարաձգել նախքան օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված գործերի քննության՝ Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետը՝ վեց ամսից դարձնելով ինը ամիս: Նշվածը մի կողմից կապահովի ժամկետի իրատեսականությունը, մյուս կողմից՝ կապահովի գործերի համակողմանի քննություն իրականացնելու հնարավորությունը:

**«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝**

Հաշվի առնելով 2025 թվականին վարչական դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր թիվը՝ 25.954, ըստ այդմ, դատավորների ծանրաբեռնվածությունը՝ առաջարկում ենք երկարաձգել նախքան օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված գործերի քննության՝ Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետը՝ վեց ամսից դարձնելով տասներկու ամիս: Նշվածը մի կողմից կապահովի ժամկետի իրատեսականությունը, մյուս կողմից՝ կապահովի գործերի համակողմանի քննություն իրականացնելու հնարավորությունը:

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝**

Սահմանադրական դատարանի 23.09.2025 թվականի թիվ ՍԴՈ-1797 որոշմամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասին, 61-րդ հոդվածին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր է ճանաչվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասը: Հաշվի առնելով քաղաքացիական և քրեական դատավարությունների վարույթային առանձնահատկությունները, առավելապես վերանայման վարույթների տարբերությունները՝ առաջարկում ենք հանել Նախագծի 1-ին հոդվածը, ըստ այդմ՝ փաթեթից հանելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքն ամբողջությամբ՝ հաշվի առնելով, որ այն բաղկացած է մեկ հոդվածից:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**